

Ղընա (Kena). Ըստ Baedekerի նախնեաց Kainépolisն է, իսկ ըստ այլոց՝ յոյները CAENE կը կոչէին զայն: 1927ի մարդահամարին համաձայն 34438 բնակիչ ունէր: Գահիրէէն 280 մղոն հեռու, մայրաքաղաքը Վատի-Հալֆայի կցող երկաթուղիի գիծին վերայ, այս քաղաքը իր բարգաւաճումը կը պարտի Բօսնէյի մօտաւորութեան: Ունի զարգացած բրտագործութիւն, շնորհիւ մասնաւոր հողի մը, որ իր շուրջը կը գտնուի առատօրէն: Իր առեւտուրին գրախաւոր նիւթերն են արմաւ, արմաթ և խեցեղէն: Ագոնց կու տայ մի քանի շահեկան տեղեկութիւններ եւս: Կ'ըսէ, թէ քաղաքը կը կոչուէր Խուլփս, նաև Խուպսու, ինչպէս նաև Ղուլս և Քեմէ:

Հին ատեն գլխաւոր քաղաքն էր համանուն կուսակալութեան և ըստ Չելլարիոսի՝ հռչակաւոր վաճառատեղի, Նեղոսի վրայ նաւահանգիստով մը: Բնակիչները եգիպտացիներ են, որոնք իբր թէ այս քաղաքին անունով կոչուած են ղպաի, կարծիք մը՝ որ արժէք չի ներկայացներ ըստ իս: Բնակչութեան մաս կը կազմէին նաև Արաբներ, ըստ Ագոնցի:

Այս քաղաքը յիշուած է Պտղոմէոսէ, Ստրաբոնէ, Պլինիոսէ, ինչպէս Պլուտարքոսէ, որ քաղաքին անունը ստուգաբանել փորձած է ըսելով, թէ Խոփաոս կամ Քօփքօ եգիպտական լեզուով զրկուած կամ պակասում կը նշանակէ, վասնզի իսիս հոս առնելով Ոսերիտի մահուան գոյժը, իբր սուգի նշան կտրեց իր գլուխին ցցուն մազերէն մէկը, որով՝ ըստ Պլուտարքոսի՝ քաղաքը կոչուեցաւ Խոփոո (Ագոնց, նոյն, էջ 82):

Չոնորասի համաձայն, այս քաղաքը հալածանքի դարերուն Դիոկղետիանոս կործանած է (նոյն):

Ըստ Պատեքլըրի՝ Քէնա մեկնակէտն էր անա-